# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՊԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-2019/2-5

ք.Երևան «17» 05 2019թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Է.Գևորգյանի, որը գործում է ՀՀ ՊԵԿ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ՀՀ ՊԵԿ <<ՈՒսումնական կենտրոն>> ՊՈԱԿ- ն, ի դեմս տնօրեն Լ. Բարխուդարյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տպագրական աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 823644 (ութ հարյուր քսաներեք հազար վեց հարյուր քառասունչորս) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ պետական եկամուտների կոմիտե<br>ք.Երևան, Մովսես Խորենացու 3,7<br>ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն<br>900013202016, 900013574018, 02647057<br>Էդգար Գեվորգյան<br>_____<br>/ստորագրություն/<br>Կ.Տ | ՀՀ ՊԵԿ <<ՈՒսումնական կենտրոն>><br>ՊՈԱԿ<br>ք. Երևան, Ահարոնյան 12/3<br>Երևանի ԹԻՎ 1 ՏԳԲ<br>ՀՀ 900018002585<br>ՀՎՀՀ 00107399<br>Լևոն Բարխուդարյան<br>_____<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |

Հավելված N 1
« 27 » 05 2019թ. կնքված
ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-2019/2-5 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՀՀ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | ընդհանուր գին | կատարման հասցեն ժամկետը** |
| 5 | CPV 79821200/38 | ՀՀ ՊԵԿ բլանկ, Ձևաթղթի չափերը՝ 210 մմ * 297 մմ, տպագրությունը օֆսեթ, 4+0, թղթի տեսակը օֆսեթ՝ առնվազն 80 գ/մ². | Հատ | 6 | 4 500 | 27000 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 օրացույցային օրվա ընթացքում: /ՀՀ ՊԵԿ, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7/ |
| 6 | CPV 79821200/39 | ՀՀ ՊԵԿ բլանկ / եռալեզու/, Ձևաթղթի չափերը՝ 210 մմ * 297 մմ, տպագրությունը օֆսեթ, 4+0, թղթի տեսակը օֆսեթ՝ առնվազն 80 գ/մ². | Հատ | 24 | 400 | 9600 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 օրացույցային օրվա ընթացքում: /ՀՀ ՊԵԿ, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7/ |
| 7 | CPV 79821200/40 | Կոմիտեի նախագահի բլանկի Ձևաթղթի չափերը՝ 210 մմ * 297 մմ, տպագրությունը օֆսեթ, 4+0, թղթի տեսակը օֆսեթ՝ առնվազն 80 գ/մ². | Հատ | 29 | 300 | 8700 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 օրացույցային օրվա ընթացքում: /ՀՀ ՊԵԿ, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7/ |
| 8 | CPV 79821200/41 | Կոմիտեի նախագահի բլանկ /եռալեզու/ Ձևաթղթի չափերը՝ 210 մմ * 297 մմ, տպագրությունը օֆսեթ, 4+0, թղթի տեսակը օֆսեթ՝ առնվազն 80 գ/մ². | Հատ | 29 | 300 | 8700 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 օրացույցային օրվա ընթացքում: /ՀՀ ՊԵԿ, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7/ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 10 | CPV 79821200/43 | Նախագահի տեղակալի բլանկ Ձևաթղթի չափերը՝ 210 մմ * 297 մմ, տպագրությունը օֆսեթ, 4+0, թղթի տեսակը օֆսեթ՝ առնվազն 80 գ/մ$^2$. | Հատ | 15 | 800 | 12000 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 օրացույցային օրվա ընթացքում: /ՀՀ ՊԵԿ, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7/ |
| 12 | CPV 79821200/45 | Նախագահի առաջին տեղակալի բլանկ Ձևաթղթի չափերը՝ 210 մմ * 297 մմ, տպագրությունը օֆսեթ, 4+0, թղթի տեսակը օֆսեթ՝ առնվազն 80 գ/մ$^2$. | Հատ | 48 | 50 | 2400 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 օրացույցային օրվա ընթացքում: /ՀՀ ՊԵԿ, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7/ |
| 13 | CPV 79821200/46 | Նախագահի առաջին տեղակալի բլանկ /եռալեզու/ Ձևաթղթի չափերը՝ 210 մմ * 297 մմ, տպագրությունը օֆսեթ, 4+0, թղթի տեսակը օֆսեթ՝ առնվազն 80 գ/մ$^2$. | Հատ | 48 | 50 | 2400 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 օրացույցային օրվա ընթացքում: /ՀՀ ՊԵԿ, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7/ |
| 15 | CPV 79821200/48 | Գլխավոր քարտուղարի բլանկ /եռալեզու/ Ձևաթղթի չափերը՝ 210 մմ * 297 մմ, տպագրությունը օֆսեթ, 4+0, թղթի տեսակը օֆսեթ՝ առնվազն 80 գ/մ$^2$. | Հատ | 29 | 300 | 8700 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 օրացույցային օրվա ընթացքում: /ՀՀ ՊԵԿ, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7/ |
| 16 | CPV 79821200/59 | Գլխավոր քարտուղարի հրամանի բլանկ Ձևաթղթի չափերը՝ 210 մմ * 297 մմ, տպագրությունը օֆսեթ, 4+0, թղթի տեսակը օֆսեթ՝ առնվազն 80 գ/մ$^2$. | Հատ | 48 | 50 | 2400 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 օրացույցային օրվա ընթացքում: /ՀՀ ՊԵԿ, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7/ |
| 17 | CPV 79821200/49 | Քննչական վարչության բլանկ, Ձևաթղթի չափերը՝ 210 մմ * 297 մմ, տպագրությունը օֆսեթ, 4+0, թղթի տեսակը օֆսեթ՝ առնվազն 80 գ/մ$^2$. | Հատ | 37"8 | 200 | 7560 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 օրացույցային օրվա ընթացքում: /ՀՀ ՊԵԿ, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7/ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 18 | CPV 79821200/50 | ՏՊՀՈՒՍ հանձնարարագիր , (կրկնօրինակով) տպագրությունը՝ 4+1, համարակալումով ՝ 4204301-4207200, համարակալման թվերը լինեն կարմիր գույնի, թղթի տեսակը օֆսեթ՝ առնվազն 80 գ/մ²: | Հատ | 10"34 | 5 800 | 60000 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 օրացույցային օրվա ընթացքում: /ՀՀ ՊԵԿ, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7/ |
| 19 | CPV 79821200/51 | ՏՊՀԹՍ հանձնարարագիր , (կրկնօրինակով) տպագրությունը՝ 4+1, համարակալումով՝ 4119501-4131000, համարակալման թվերը լինեն կարմիր գույնի, թղթի տեսակը օֆսեթ՝ առնվազն 80 գ/մ²: | Հատ | 9"39 | 23 000 | 216000 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 օրացույցային օրվա ընթացքում: /ՀՀ ՊԵԿ, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7/ |
| 20 | CPV 79821200/53 | Վարչական իրավախախտումների գործի վերաբերյալ որոշման ձևաթղթերի տպագրություն: Թղթի չափսերը՝ A4 չափսի, թղթի տեսակը ՝ թուղթ օֆսեթային, առնվազն 80 գմ², տպագրությունը՝ երկկողմանի, 1+1, : ամարակալումով ՝ 389001-414000, համարակալման թվերը լինեն կարմիր գույնի: | Հատ | 6"48 | 25 000 | 162000 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 օրացույցային օրվա ընթացքում: /ՀՀ ՊԵԿ, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7/ |
| 21 | CPV 79821200/54 | Անցագրեր, թղթի տեսակը օֆսեթ՝ առնվազն 80 գ/մ²,տպագրությունը 1+1, չափերը 85*95մմ: | Հատ | 0"78 | 100 000 | 78000 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 օրացույցային օրվա ընթացքում: /ՀՀ ՊԵԿ, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7/ |
| 22 | CPV 79821200/55 | Անցագրեր, թղթի տեսակը օֆսեթ՝ առնվազն 80 գ/մ²,տպագրությունը 1+1,չափերը 85*95մմ: | Հատ | 0"78 | 100 000 | 78000 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 օրացույցային օրվա ընթացքում: /ՀՀ ՊԵԿ, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7/ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 26 | CPV 79821200/52 | 3-րդ ձև թույլտվության ձևակերպման քարտ , թղթի չափերը ՝ A5, թղթի տեսակը կավճապատ, տպագրությունը՝ 1+0, թղթի հաստությունը ՝ առնվազն 300 գմ² | Հատ | 48 | 50 | 2400 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 օրացույցային օրվա ընթացքում: /ՀՀ ՊԵԿ, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7/ |
| 28 | CPV 79821200/61 | Ծանուցում, թղթի տեսակը օֆսեթ, առնվազն 80 գմ², , չափերը՝ A4, 297*210 մմ, տպագրությունը օֆսեթ եղանակով 1+0: | Հատ | 2"62 | 4 000 | 10500 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 օրացույցային օրվա ընթացքում: /ՀՀ ՊԵԿ, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7/ |
| 30 | CPV 79821200/63 | Մաքսային կանոնների խախտման արձանագրություն, թղթի տեսակը օֆսեթ, առնվազն 80 գմ², չափերը՝ A4, 297*210 մմ, տպագրությունը օֆսեթ եղանակով 1+1, համարակալված կարմիր գույնով 100001-100500, | Հատ | 11"76 | 500 | 5880 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 օրացույցային օրվա ընթացքում: /ՀՀ ՊԵԿ, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7/ |
| 32 | CPV 79821200/65 | Բեռի փաստացի քաշի վերաբերյալ արձանագրություն, թղթի տեսակը օֆսեթ, առնվազն 80 գմ², չափերը՝ A4, 297*210 մմ, տպագրությունը 1+0 | Հատ | 17"64 | 100 | 1764 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 օրացույցային օրվա ընթացքում: /ՀՀ ՊԵԿ, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7/ |
| 33 | CPV 79821200/66 | Բեռի բարձման վերաբերյալ տեղեկանք 400 հատ հայերեն, 400 հատ ռուսերեն, թղթի տեսակը օֆսեթ, առնվազն 80 գմ², չափերը՝ A4, 297*210 մմ, տպագրությունը օֆսեթ եղանակով 1+0 | Հատ | 7"35 | 800 | 5880 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 օրացույցային օրվա ընթացքում: /ՀՀ ՊԵԿ, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7/ |
| 37 | CPV 79821200/70 | Աշխատակցի անձնական քարտի տպագրություն, 1+1, թղթի տեսակը՝ ստավարաթուղթ ֆուտբորտ 300 գ/մ²,թղթի չափերը՝ 297*210 մմ, տպագրությունը օֆսեթ եղանակով 1+1 | Հատ | 28"8 | 200 | 5760 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 օրացույցային օրվա ընթացքում: /ՀՀ ՊԵԿ, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7/ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 38 | CPV 79821200/71 | Ուղևորային մաքսային հայտարարագիր, 21 000 հատ հայերեն, 2 500 հատ ռուսերեն, 1 000 հատ անգլերեն: Թղթի չափսերը՝ A4 չափսի, թղթի տեսակը՝ օֆսեթային, առնվազն՝ 80 գմ², տպագրությունը՝ 1+1: | Հատ | 4"4 | 24 500 | 108000 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 օրացույցային օրվա ընթացքում: /ՀՀ ՊԵԿ, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7/ |

** աշխատանքի կատարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մովսես Խորենացու 3,7
ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
900013202016, 900013574018,
02647057
Էդգար Գեվորգյան

/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

ՀՀ ՊԵԿ <<ՈՒսումնական կենտրոն>>
ՊՈԱԿ
ք. Երևան, Ահարոնյան 12/3
Երևանի ԹԻՎ 1 ՏԳԲ
ՀՀ 900018002585
ՀՎՀՀ 00107399
Լևոն Բարխուդարյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
« 27 » 05 2019թ. կնքված
ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-2019/2-5 ծածկագրով պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հ/Հ | բյուջետային ծախսերի տնտես. դաս. հոդված | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ի ՀՀ ՊԵԿ արտաբյուջետային միջոցներով ախատեսված հատկացումների հաշվին՝ ըստ ամիսների, այդ թվում* | | | | | | | | |
| | | | | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 5 | 4234 | CPV 79821200/38 | ՀՀ ՊԵԿ բլանկի տպագրական աշխատանքներ | 27000 | 27000 | 27000 | 27000 | 27000 | 27000 | 27000 | 27000 | 27000 |
| 6 | 4234 | CPV 79821200/39 | ՀՀ ՊԵԿ բլանկի/ եռալեզու/ տպագրական աշխատանքներ | 9600 | 9600 | 9600 | 9600 | 9600 | 9600 | 9600 | 9600 | 9600 |
| 7 | 4234 | CPV 79821200/40 | Կոմիտեի նախագահի բլանկի տպագրական աշխատանքներ | 8700 | 8700 | 8700 | 8700 | 8700 | 8700 | 8700 | 8700 | 8700 |
| 8 | 4234 | CPV 79821200/41 | Կոմիտեի նախագահի բլանկի /եռալեզու/ տպագրական աշխատանքներ | 8700 | 8700 | 8700 | 8700 | 8700 | 8700 | 8700 | 8700 | 8700 |
| 10 | 4234 | CPV 79821200/43 | Նախագահի տեղակալի բլանկի տպագրական աշխատանքներ | 12000 | 12000 | 12000 | 12000 | 12000 | 12000 | 12000 | 12000 | 12000 |
| 12 | 4234 | CPV 79821200/45 | Նախագահի առաջին տեղակալի բլանկի տպագրական աշխատանքներ | 2400 | 2400 | 2400 | 2400 | 2400 | 2400 | 2400 | 2400 | 2400 |
| 13 | 4234 | CPV 79821200/46 | Նախագահի առաջին տեղակալի բլանկի /եռալեզու/ տպագրական աշխատանքներ | 2400 | 2400 | 2400 | 2400 | 2400 | 2400 | 2400 | 2400 | 2400 |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 15 | 4234 | CPV 79821200/48 | Գլխավոր քարտուղարի բլանկի /եռալեզու/ տպագրական աշխատանքներ | 8700 | 8700 | 8700 | 8700 | 8700 | 8700 | 8700 | 8700 | 8700 |
| 16 | 4234 | CPV 79821200/59 | Գլխավոր քարտուղարի հրամանի տպագրական աշխատանքներ | 2400 | 2400 | 2400 | 2400 | 2400 | 2400 | 2400 | 2400 | 2400 |
| 17 | 4234 | CPV 79821200/49 | Քննչական վարչության բլանկի տպագրական աշխատանքներ | 7560 | 7560 | 7560 | 7560 | 7560 | 7560 | 7560 | 7560 | 7560 |
| 18 | 4234 | CPV 79821200/50 | ՏՊՀՈՒՍ հանձնարարագրի տպագրական աշխատանքներ | 60000 | 60000 | 60000 | 60000 | 60000 | 60000 | 60000 | 60000 | 60000 |
| 19 | 4234 | CPV 79821200/51 | ՏՊՀԹՍ հանձնարարագրի տպագրական աշխատանքներ | 216000 | 216000 | 216000 | 216000 | 216000 | 216000 | 216000 | 216000 | 216000 |
| 20 | 4234 | CPV 79821200/53 | ՎԻԳ ձևաթղթերի տպագրական աշխատանքներ | 162000 | 162000 | 162000 | 162000 | 162000 | 162000 | 162000 | 162000 | 162000 |
| 21 | 4234 | CPV 79821200/54 | Անցագրերի տպագրական աշխատանքներ | 78000 | 78000 | 78000 | 78000 | 78000 | 78000 | 78000 | 78000 | 78000 |
| 22 | 4234 | CPV 79821200/55 | Անցագրերի տպագրական աշխատանքներ | | | 78000 | 78000 | 78000 | 78000 | 78000 | 78000 | 78000 |
| 26 | 4234 | CPV 79821200/52 | 3-րդ ձև թույլտվության ձևակերպման քարտի տպագրական աշխատանքներ | 2400 | 2400 | 2400 | 2400 | 2400 | 2400 | 2400 | 2400 | 2400 |
| 28 | 4234 | CPV 79821200/61 | Ծանուցման տպագրական աշխատանքներ | 10500 | 10500 | 10500 | 10500 | 10500 | 10500 | 10500 | 10500 | 10500 |
| 30 | 4234 | CPV 79821200/63 | մաքսային կանոնների խախտման արձանագրությա տպագրական աշխատանքներ | 5880 | 5880 | 5880 | 5880 | 5880 | 5880 | 5880 | 5880 | 5880 |
| 32 | 4234 | CPV 79821200/65 | բեռի փաստացի քաշի վերաբերյալ արձանագրությա տպագրական աշխատանքներ | 1764 | 1764 | 1764 | 1764 | 1764 | 1764 | 1764 | 1764 | 1764 |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 33 | 4234 | CPV 79821200/66 | բեռի բարձման վերաբերյալ /հայերեն և ռուս./ տեղեկանքի տպագրական աշխատանքներ | 5880 | 5880 | 5880 | 5880 | 5880 | 5880 | 5880 | 5880 | 5880 |
| 37 | 4234 | CPV 79821200/70 | Աշխատակցի անձնական քարտի տպագրական աշխատանքներ | 5760 | 5760 | 5760 | 5760 | 5760 | 5760 | 5760 | 5760 | 5760 |
| 38 | 4234 | CPV 79821200/71 | Ուղևորային մաքսային հայտարարագրի տպագրական աշխատանքներ | | | | | | 108000 | 108000 | 108000 | 108000 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մովսես Խորենացու 3,7
ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
900013202016, 900013574018,
02647057
Էդգար Գեվորգյան

/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

ՀՀ ՊԵԿ <<Ուսումնական կենտրոն>>
ՊՈԱԿ
ք. Երևան, Ահարոնյան 12/3
Երևանի ԹԻՎ 1 ՏԳԲ
ՀՀ 900018002585
ՀՎՀՀ 00107399
Լևոն Բարխուդարյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

*Հավելված 3*
*« 27 » 05 2019թ. կնքված*
**ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-2019/2-5** *ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ_____ |
| հվհհ _____ | հվհհ_____ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«  » «  » 20  թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Աշխատանքը հանձնեց | Աշխատանքը ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |